

**ՕԼԻՄՊԻԱ ԳԵՂԱՄՅԱՆ**

ԵՊՀ քաղաքացիական դատավարության  
ամբիոնի դասախոս

**ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՍՐ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ  
ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՍԱՍՆԱԿՅՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎՈՒՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**



Ծրջակա միջավայրի պաշտպանությունը մեծապես կախված է էկոլոգիական որոշումների կայացման գործընթացում հասարակության մասնակցությունից: Հասարակության արդյունավետ մասնակցությունն ապահովելու համար անհրաժեշտ է տեղեկատվության մատչելիություն և այդ տեղեկատվությունը տիրապետող պաշտոնատար անձանց աջակցությունը: Այստեղ, փաստացի, տեղ է գտնում պարտադիր համագործակցություն, ու թեև համագործակցողների իրավական կարգավիճակը տարբեր է և նույնիսկ հակընդիմ, սակայն համագործակցության նպատակը մեկն է՝ ապահովել շրջակա միջավայրի որակը: Ինչպես նշում է Ա. Խոկոյանը. «Հասարակությունը այս գործընթացում խաղում է երկակի դեր. մի կողմից նա համագործակցում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի պետական կառույցների հետ, մյուս կողմից՝ հասարակությունը, լուծելով իր խնդիրները, հսկողություն է իրականացնում օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ունեցած իրենց լիազորությունների իրականացման նկատմամբ...»<sup>1</sup>:

Հասարակության մասնակցությունը էկոլոգիական որոշումների կայացմանը լուրջ հնարավորություն է տալիս այդ որոշումների կայացումը ավելի բաց դարձնելու, համապատասխան որոշումներ կայացնող անձանց պատասխանատվությունը բարձրացնելու համար, ինչը կարևոր նախապայման է ողջ գործընթացի արդյունավետ կայացման համար: Այսինքն, հասարակությանը պետք է հնարավորություն տրվի արտահայտել իր մոտեցումներն ու կարծիքը, իսկ պետական մարմինները պետք է դրա հետ հաշվի նատեն:

Յուրաքանչյուր ոք պետք է իրավունք ունենա ոչ միայն ստանալ էկոլոգիական տեղեկատվություն, այլև պետք է հնարավորություն ունենա մասնակցելու,

և անհրաժեշտության դեպքում ազդելու այդ բնագավառում կայացվելիք որոշումների ընդունման վրա, որոնք կարող են նորանոր ռիսկեր ստեղծել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության համար, ինչը ոչ մի դեպքում անհետևամբ չի բողմի նարդկային կյանքն ու նրա կենսագործունեությունը<sup>2</sup>:

Գաղտնիք չէ, որ նախկին ԽՍՀՄ տարածքում ժողովրդավարությանը տանող դրսերն ամուր փակված էին: Սակայն, աստիճանաբար քաղաքացիներն ու հասարակական կազմակերպությունները փորձեցին դրանք բացել: Իհարկե, հաջողությունների հասնելը լի էր դժվարություններով, ու պետք էր գիտելիքների, փորձի, հմտությունների համապատասխան բանալին գտնել<sup>3</sup>:

Ծրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության մատչելիությունը, որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցությունը և արդարադատության մատչելիությունը այն երեք սյուներն են, որոնց վրա հիմնվում է ՀՀ կողմից 2001թ. մայիսի 14-ին վավերացրած «Ծրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիան, որը, հանդիսանալով ներպետական օրենսդրության մաս, մանրակրկիտ և հստակ սահմանում է համապատասխան գործընթացները:

Ցանկանալով ներկայացնել շրջակա միջավայրի առնչությամբ որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության իրավունքի ձևավորման պատմությունը, պետք է նշել, որ հասարակայնության մասնակցության իրավունքի որոշակի ասպեկտներ քննարկվել են նաև այնպիսի միջազգային փաստաթղթերում, ինչպիսիք են՝ ՍԱԿ-ի կողմից 1982թ-ին ընդունած «Բնության համաշխարհային կրովարտակը», որի կետ 23 համաձայն յուրաքանչյուր ոք անհա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տապես կամ կոլեկտիվ ձևով կարող է մասնակցել անմիջականորեն իրեն շրջապատող միջավայրի վերաբերյալ որոշումների քննարկման գործընթացին: Ինչ վերաբերյալ է տարածաշրջանային ակտերին, ապա Եվրոպայի խորհրդի 1986թ-ին ընդունված N171 բանաձևը, որը մշակվել էր Եվրոպայի տեղական և տարածաշրջանային մարմնների կոնֆերանսի արդյունքում, նույնպես ամրագրել էր հստակ դրույթներ՝ շրջակա միջավայրի առնչությամբ որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության դրույթներ նախատեսված են եղել նաև ՍՍԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» 1991թ-ի կոնվենցիայով (հոդված 2 և 4), «Կիմայի փոփոխության մասին» 1992թ. կոնվենցիայով (հոդված 6). ՍՍԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վրաբների անդրսահմանային ներգործության մասին» կոնվենցիայով<sup>4</sup> (հոդված 9): Ո-ին դե ժանելյոյի 1992թ-ի «Ակզրունքների հոչակագրի» 10-րդ սկզբունքը սահմանում էր, որ էկոլոգիական խնդիրներն առավել արդյունավետ կարող են լուծվել բոլոր շահագրգիռ քաղաքացիների մասնակցությամբ, և յուրաքանչյուր ոք նատչելի տեղեկատվության հիման վրա պետք է հնարավորություն ունենա մասնակցելու որոշումների կայացմանը: Դեռ ավելին. նոյն կոնֆերանսին ընդունած «21 դարի օրակարգ»-ում առավել մանրամասն նախատեսված են կայուն զարգացման հասնելու բնագավառում պրակտիկայի արդյունավետ ձևերն ու մեթոդները, և մեծ ուշադրություն է հատկացված հասարակայնության մասնակցությանը: Եվ, վերջապես, 1995թ-ին ԵՏՀ տարածաշրջանի պետությունների բնապահպանության նախարարների կողմից Սովորական ընդունված տեղեկատվության նատչելիության և հասարակայնության նասնակցության ապահովման դեկալար սկզբունքներում հասարակայնության մասնակցությանը նվիրված էին թվով 9 կետեր, որոնք են հանդիսացել Օրիուսի կոնվենցիայի համապատասխան դրույթների համար: Քաղաքացիների մասնակցությունը բնության պահպանության վերաբերյալ օրենքների և որոշումների մշակման ու դրանց իրականացման նկատմամբ հսկողությանը նախատեսված էր նաև «Բնության պահպանության մասին ՀՀ օրենսդրության հիմունքներում», որը, ցավոք, այլև չի գործում:

Թե անհատ քաղաքացիների, և թե հասարա-

կական կազմակերպությունների ունակություններն օգտագործելը, անխոս, նախ և առաջ պետք է հարստացնի ու համարի շրջակա միջավայրի ոլորտում կայանալիք որոշման հիմնավորվածությունն ու կարևորությունը: Այդ հնարավորություններն օգտագործելը կարող է նաև մեծապես օժանդակել շրջակա միջավայրի պահպանության բնագավառի օրենսդրական ակտերի կիրառմանը, քանզի ենթադրվում է, որ քաղաքացիներն ու պետական մարմիններն ունեն ընդհանուր նպատակ, այն է՝ ընդհանուր բարեկեցության, շրջակա միջավայրի որակի պահպանության ու ապահովման համար օրենքների պահանջների հնարավոր իրականացում: Անհատներ, հասարակական կազմակերպություններ, շրջակա միջավայրի բնագավառում պատասխանատու պաշտոնատար անձինք փոխհարաբերություններում հատկապես արդյունավետ է դառնում հասարակայնության մասնակցության դերը շրջակա միջավայրի պահպանության գործում, քանի որ այստեղ օգտագործվում է քաղաքացիների անմիջական կապը իրենց շրջապատող միջավայրի հետ, ինչի արդյունքում, հասարակությունից հաճախ կարելի է ստանալ շրջակա միջավայրի որակի վերաբերյալ այնպիսի տեղեկատվություն, որը պետական մարմինների համար դժվար է ձեռք բերել: Օրիուսի կոնվենցիայի համապատասխան դրույթները որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության վերաբերյալ կարծես թե հիշեցնում են պետական մարմիններին, թե ինչքան կարևոր է իրենց գործունեության արդյունավետ իրականացման համար հասարակայնության մասնակցությունը: Քանի որ շատ հաճախ, ինչպես քազմից ապացուել է պրակտիկան, կայացվում են որոշումներ, որոնք առաջին հայացքից թվում են լավագույնը, մինչդեռ դրանց թարնված գործոնները կարող են ի հայտ գալ միայն հասարակայնության մասնակցության արդյունքում, ինչն էլ իր հերթին կվանիսեր անբարենպաստ հետևանքները յուրաքանչյուրի և բոլորի համար: Եվ, հակառակը, հասարակայնության ձևական մասնակցությունը ու նրա անդամների մոտեցումները շրջանցելը իշեցնում են այդ որոշման իրագործման արդյունավետությունը, քանի որ գործընթացի օրինականությունն առհասարակ դրվում է կասկածի տակ:

ՀՀ գործող Սահմանադրության մեջ այս իրավունքի հիմքերն ամրագրված են 28 հոդվածում, որը հոչակում է. «Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արիեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

իրավունք:

Ցուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք:

Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով»:

1996թ-ի նոյեմբերի 1-ի ՀՀ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի<sup>5</sup> դրույթների հիման վրա կարելի է ասել, որ քաղաքացիներն ունեն շրջակա միջավայրի պահպանության բնագավառի հասարակական կազմակերպություններին միանալու և մասնակցելու իրավունք, որոնք վերոհիշյալ օրենքի 22 հոդվածի համաձայն կարող են.

1. տարածել տեղեկատվություն իրենց գործունեության մասին,

2. հիմնել զանգվածային լրատվության իրենց միջոցները,

3. կազմակերպել առանց գենքի, խաղաղ երթեր, ցույցեր, միտինգներ և հավաքներ,

4. ներկայացնել և պաշտպանել հասարակական կազմակերպության իրավունքներն ու օրինական շահերը դատարաններում, պետական իշխանության մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, այլ հասարակական կազմակերպություններում:

Ակնհայտ է, որ ՀՀ Սահմանադրությունը շրջակա միջավայրի բնագավառի որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության հարաբերությունները մանրամասն իրավական կարգավորման չի ենթարկում, այլ ամրագրում է միայն ելակետային դրույթներ, որի հիման վրա ընդունվել և դեռ անհրաժեշտություն կա ընդունելու համապատասխան ոլորտի օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր:

Մինչդեռ, ըստ Օրիուսի կոնվենցիայի՝ հասարակայնության ներկայացուցիչներն իրավունք ունեն մասնակցելու որոշումների ընդունմանը, այսինքն, ամեն մի գործողություն, որի հետևանքով կարող է վատրարանալ շրջակա բնական միջավայրի վիճակը, պետք է դառնա հասարակական բննարկման առարկա և պետք է իրագործվի միայն նրա համաձայնությամբ: Ընդ որում հասարակայնության մասնակցությանը վերաբերվող դրույթները՝ կախված կայացվելիք որոշման ոլորտի կառավարման մակարդակի գործընթացների ձևից, բաժանվում են երեք խմբի: Կոնվենցիայի 6-րդ հոդվածը վերաբերվում է հասարակայնության մասնակցությանը գործունեության կոնկրետ

տեսակների կապակցությամբ որոշումներու գործընթացին, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա: 7-րդ հոդվածը վերաբերվում է հասարակայնության մասնակցությանը շրջակա միջավայրին առնչվող ծրագրերին, նախագծերին և քաղաքականությանը, իսկ 8-րդ հոդվածը վերաբերվում է հասարակայնության մասնակցությանը անմիջական կիրառման ուժ ունեցող նորմատիվ դրույթների, և/կամ ընդհանուր կիրառում ունեցող իրավաբանորեն պարտադիր նորմատիվ ակտերի նախապատրաստման գործին:

Հատկանշական է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածը նախատեսում է, որ. «Սույն Համաձայնագրի դրույթները չեն կանխակալում որևէ կողմի իրավունքը շարունակել իրագործել կամ ձեռնարկել միջոցառումներ, որոնք ենթադրում են տեղեկատվության ավելի լայն մատչելիություն, հասարակայնության ավելի լայն մասնակցություն որոշումների ընդունմանը ... , քան դա նախատեսված է սույն համաձայնագրով»: Փաստորեն, 3-րդ հոդվածը սահմանում է, որ Կոնվենցիայի դրույթները, այդ թվում 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածները նախատեսում են նվազագույն պայմաններ, և կողմերը կարող են ավելի լայն արարողակարգեր սահմանել առողջ և բարենպաստ շրջակա միջավայրի ստեղծման ու պահպանման նպատակին հասնելու համար:

Հասարակայնության մասնակցությունը ենթադրում է հասարակության ներկայացուցիչների համագործակցությունը պետական մարմինների հետ որոշումների ընդունման և քաղաքականության մշակման գործընթացում առավել լուրջ արդյունքների հասնելու նպատակով: Օրիուսի կոնվենցիան հնարավորություն է ընձեռում գնալ այն ուղիղվ, որով կարելի է հասնել ցանկալի արդյունքների, քանի որ հստակ ներկայացնում է, թե նվազագույնս ինչ է անհրաժեշտ վերջնական նպատակին հասնելու համար, այն է՝ համապատասխան տեղեկատվության տիրապետում, ծանուցման արդյունավետ համակարգի ստեղծում, իրար հաջորդող անհրաժեշտ գործընթացներ և հասարակայնության մասնակցության արդյունքների պարտադիր հաշվի առնում: Հասարակայնության մասնակցության աստիճանը յուրաքանչյուր կոնկրետ գործընթացին կախված է տարբեր գործուներից՝ ներառյալ սպասարկ արդյունքը, դրանց ծավալները, որքա՞ն մարդկանց ու որքանո՞վ կվերաբերի այդ գործընթացը: Խնդրի լուծման այդ արդյունքը կլինի տեղական, տարածաշրջանային, թե՛ համապետական և

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մակարդակով: Գաղտնիք չէ, որ եթե խնդիրը դատնում է առավել բարդ և վերաբերվում է ավելի մեծ թվով մարդկանց ու լուրջ գործուների, բազմաթիվ պետություններում՝ ցավոք, նաև Հայաստանի Հանրապետությունում, շատ հաճախ հասարակության ներկայացուցիչների դերը իշխում է, իսկ այդ որոշումների համար պատասխանատու պետական մարմինների ու պաշտոնատար անձանց դերը բարձրանում: Մինչդեռ Օրիութիւն կոնվենցիան սահմանում է, որ հասարակայնությունը կարող է մասնակցել որոշումների ընդունման գործընթացի ամենատարբեր փուլերում, սկսած այդ որոշումների մշակման, տարբեր քննարկումների, խորհրդատվությունների փուլերը և ընդիուպ դրանց վերջնական ընդրունման շրջանը: Ընդ որում որոշումների կայացմանը մասնակցության գործընթացում հասարակայնության ներկայացուցիչների կարգավիճակը կարող է տարբեր լինել: Նրանք, ում ուղղակիրեն կվերաբերի ընդունվող որոշման արդյունքը և մշակվող քաղաքականությունը, պետք է օժտված լինեն ավելի լայն հնարավորություններով ազդելու ընդունվող որոշման վրա: Այստեղ էլ հենց երեսում է «հասարակություն» և «շահագրգիռ հասարակություն» հասկացությունների տարբերությունները: Ըստ Օրիութիւն կոնվենցիայի 2-րդ հոդվածի «Ճ» կետի՝ «հասարակություն» նշանակում է մեկ կամ մեկից ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձ և համաձայն ազգային օրենսդրության կամ պրակտիկայի՝ դրանց միությունները, կազմակերպությունները կամ խմբերը: Իսկ «շահագրգիռ հասարակություն» նշանակում է մի հանրություն, որն իր վրա կրում, կամ կարող է ազդեցություն կրել շրջակա միջավայրին առնչվող որոշումներից, կամ, որը շահագրգությած է այդ որոշումներով: Սույն սահմանման իմաստով քննապահպանական հասարակական կազմակերպությունները, որոնք համապատասխանում են ազգային օրենսդրության ներկայացրած բոլոր պահանջներին, համարվում են շահագրգիռ կազմակերպություններ, եթե նպաստում են շրջակա միջավայրի պահպանությանը: Ինչպես տեսնում ենք, Կոնվենցիան հնարավորինս հստակ տալիս է այս հասկացությունների մեջնարանությունները, դրանով իսկ փորձելով խուսափել անհջողություններից համապատասխան ոլորտներում: Ակնհայտ է, որ Կոնվենցիան առաջնորդվում է այն սկզբունքով, որ կայանալիք որոշումների ընդունման գործընթացին պետք է ընդգրկվեն ոչ միայն այն անձինք, որոնց անմիջական շահերին է վերաբերում այդ որոշումը, այլ նաև յուրաքանչյուր անձ և հասարակական կազմա-

կերպություն, ով կարող է իր դրական ներդրումն ունենալ շրջակա միջավայրի պահպանության գործում ընդհանրապես:

Այսինքն, որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության էությունը կայանում է նաև նրանում, որ պետական իշխանության մարմինները կարողանան հնարավորինս օգտագործել հասարակության բուռն էներգիամ՝ թե նրանից տեղեկատվություն ստանալու և թե նրա մոտեցումներն ու դիրքորոշումներն օգտագործելու միջոցով: Հասարակությունն էլ իր հերթին այս ամենն իրագործում է և անձնական շահագրգությունից, և շրջակա միջավայրի պահպանության ընդհանուր պարտականությունից ելնելով: Օրիութիւն կոնվենցիայի դրույթների իրագործումը հնարավորություն է տալիս ստեղծել գործընթացների մի համակարգ, որտեղ հասարակությունը կարող է իրականացնել իր տեղեկատվություն ստանալու, միավորումներ կազմելու, որոշումների կայացմանը մասնակցելու իրավունքները, ինչի միջոցով Կոնվենցիայի կողմերը կարող են լուծել միանգամից երկու խնդիր, այն է՝ բարձրացնել պետական մարմինների համար իրենց գործառությներն իրականացնելու արդյունավետությունը և հասարակության համար ապահովել իրենց իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման համար անհրաժեշտ բարենպաստ շրջակա միջավայր ստեղծելու հնարավորությունը:

Օրիութիւն կոնվենցիայի դրույթներից բխում է, որ հասարակայնության մասնակցությունը պետք է լինի ժամանակին, արդյունավետ, պաշտոնական և կառուցվի տեղեկատվության, երկխոսությունների, քննարկումների, արձագանքների վրա:

Ինչպես վերը նշվեց, Օրիութիւն կոնվենցիայի 6-րդ հոդվածը վերաբերվում է հասարակայնության մասնակցության այնպիսի որոշումների կայացմանը, որոնք վերաբերվում են պետական իշխանության մարմինների կողմից գործունեության կոնկրետ տեսակի համար բույլտվություն կամ լիցենզիա տալու նպատակահարմարությանը: Ըստ 6-րդ հոդվածի. «1. Յուրաքանչյուր Կողմ՝

ա) կիրառում է սույն հոդվածի դրույթներն այն որոշումների հանդեպ, որոնք առնչվում են հավելված 1-ում հիշատակված նախատեսվող գործունեությունը բույլտվություն,

բ) ազգային օրենսդրությանը համապատասխան սույն հոդվածի դրույթները կիրառում են նաև այն որոշումների հանդեպ, որոնք առնչվում են հավելված

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

1-ում չիշատակված այնպիսի նախատեսվող գործունեությունը բույլատրելուն, որը կարող է էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա...»:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածը առաջին հերթին կիրառվում է վարչական որոշումների, կամ այլ խոսքով ասված, այնպիսի որոշումների ընդունման կապակցությամբ, որոնք նպատակ են հետապնդում բույլատրել առաջարկվող կոնկրետ գործունեությունը: Նման որոշումները շատ բազմազան են, մասնավորապես, որոշումներ, որոնք վերաբերվում են տնտեսական գործունեության լիցենզավորմանը, շինարարության և շահագործման բույլտվությանը, բնական ռեսուրսների օգտագործման բույլտվությանը և այլն<sup>6</sup>:

Թեև առաջին հայացքի կարող է թվալ, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը վերաբերվում է զուտ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականին, որն անցկացվում է ՄԱԿ-ի անդամ բազմաթիվ պետություններում, այնուամենայնիվ, պետք է նշել, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականնը որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության գործընթացի ընդամենը մաս է, և առանձին վերցրած՝ իրենից բույլտվություն կամ լիցենզիա տալու արարողակարգ չի ներկայացնում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականը հենվում է նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության մանրակրկիտ վերլուծությունների վրա, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի եղակացությունը պետք է համընկնի ընդունվող որոշման բնույթի հետ: Սակայն, պետք է նշել, որ տեսականորեն և պրակտիկայում հնարավոր է նաև այլ իրավիճակ. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականը կարող է լինել դրական, այսինքն, որ նախատեսվող գործունեությունը ոչ էական բացասական ազդեցություն կունենա շրջակա միջավայրի վրա, սակայն այդ գործունեության բույլտվությունը կարող է մերժվել: Նշենք նաև, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը մեխանիկորեն կիրառվում է նաև ա. և բ. ենթակետերում նախատեսված համապատասխան գործունեությունների որոշակի փոփոխությունների կամ ընդլայնման ժամանակ, քանի որ այդ գործունեության յուրաքանչյուր փոփոխություն ևս լի է շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն ունենալու վտանգով:

Ինչպես տեսնում ենք, Կոնվենցիան նախատեսում է, որ 6-րդ հոդվածը կիրառելի կարող է լինել նախատեսվող այնպիսի գործունեությունների նկատմամբ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ

շրջակա միջավայրի վրա: Այսինքն, այստեղ շատ կարևոր է ճիշտ հասկանալ «էական» ազդեցություն երևոյթը, որի մեկնաբանությունը Օրիուսի կոնվենցիայում բացակայում է: Մինչեւ այն պետք է անպայման որոշվի, քանի որ դրանից է կախված հասարակայնության մասնակցության անհրաժեշտության խնդիրը: Նախատեսվող գործունեության ազդեցությունը «էական» բնորոշելու որոշակի չափանիշներ սահմանված են 1997թ. փետրվարի 21-ին Հայաստանի Հանրապետության միացած «Անդրսահմանային ենթատրաստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիայում, ըստ որի. «Նախատեսվող գործունեության տեսակների քննարկման ժամանակ..., Կողմերը կարող են ներքոհիշյալ մեկ կամ մի քանի չափորոշիչների հիման վրա որոշել, թե նախատեսվող գործունեության ազդեցությունը կարող է էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, թե ոչ.

ա. մասշտաբները՝ նախատեսվող գործունեության տեսակները, որոնց մասշտաբները մեծ են այդ գործունեության համար,

բ. տարածաշրջանը՝ նախատեսվող գործունեության տեսակները, որոնք իրականացվում են էկոլոգիական տեսանկյունից հատկապես զգայուն կամ կարևոր տարածքներում, կամ անմիջապես դրան հարող տարածքներում, ինչպես նաև նախատեսվող գործունեության տեսակներ այնպիսի տարածքներում, որտեղ նախատեսվող տնտեսական գործունեության առանձնահատկությունները կարող են լուրջ ազդեցություն ունենալ բնակչության վրա,

գ. հետևանքները. նախատեսվող գործունեության տեսակներ, որոնք առանձնակի բարդ և պոտենցիալ վնասակար ազդեցություն կարող են ունենալ, որը կարող է լուրջ հետևանքներ բերել ինչպես բնակչության, այնպես էլ բուսական և կենդանական աշխարհի վրա... »:

Ինչ վերաբերվում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի առնչությամբ որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության իրավական կարգավորման այլ նորմատիվ ակտերին, ապա դրանց շարքում իր տեղը ունի նաև 1995թ-ի նոյեմբերի 20-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձարանների մասին» ՀՀ օրենքը: Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձարանների մասին ինստիտուտի պատշաճ իրավական կարգավորումը լուրջ երաշխիք է բնապահպանական կորուստների կան-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

խարգելման և կայուն տնտեսական զարգացում ապահովելու համար, ինչը կարող է իրական լինել միայն ոլորտի օրենսդրական ակտերի ներքին հակասականության բացառման և դրանց միջև գործուն համակարգային կապերի ապահովման պարագայում:

Այս օրենքը թե տեսության մեջ, թե պրակտիկայում հանդիսանում է նման հարաբերությունները կարգավորող առաջին նորմատիվ ակտերից մեկը, որի կիրառման 16-ամյա արակտիկան և դրա ընդունման պահին արդեն իսկ առկա էական թերությունները պայմանավորում են դրա համակարգային վերանայման անհրաժեշտությունը:

Այնուամենայնիվ, վերոհիշյալ օրենքի 4-րդ հոդվածը սպառիչ սահմանում է նախատեսվող գործունեությունների ցանկը, որոնք ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: Իսկ 6-րդ հոդվածը նախատեսում է, որ «Զեռնարկողը, որը մտադիր է իրականացնել 4-րդ հոդվածում թվարկված որևէ նախատեսվող գործունեություն, պարտավոր է այդ մասին ծանուցել լիազորված մարմնին, որն էլ ծանուցումն ստանալուց հետո յոթնօրյա ժամկետում իրազեկ է պահում ազդակիր համայնքի դեկավարներին և հասարակայնությանը նախատեսվող գործունեության իրականացման նախաձեռնության մասին: Ազդակիր համայնքի դեկավարները և ձեռնարկողը ծանուցումն ստանալուց հետո տասնինգորյա ժամկետում կազմակերպում են նախատեսվող գործունեության վերաբերյալ հասարակական լուսմներ՝ լրատվական միջոցներով տեղեկություններ հաղորդելով նախատեսվող գործունեության լուրջությունը, լուսմների տեղի և ժամկետի մասին...»: Թեև «Ծրագիր միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է այս գործընթացում հասարակության մասնակցության բավական լայն հնարավորություններ, սակայն, պեսք է նշել, որ օրենքում առկա են փորձաքննության ընթացակարգի էական և առանցքային թերություններ: Մասնավորապես, օրենքում ակնհայտ է գործընթացի վերաբերյալ հասարակայնությանը տեղեկատվությամբ ապահովելու հստակ մոտեցման ու մեխանիզմի բացակայությունը (տեղեկատվության տրամադրման միջոցները, կարգը, տեղեկատվության բովանդակությունը և շրջանակները), փորձաքննության ընթացակարգին հասարակայնության արդյունավետ մասնակցության ապահովման մեխանիզմի թերի կարգավորվածությունը, քանի որ տարանջատված չեն պետական լիազոր մարմնի, համայնքի դեկավարի և նախաձեռնողի պարտակա-

նությունների շրջանակը հասարակական լուսմների կազմակերպման գործում: Բացի այդ օրենքի՝ փորձաքննության ընթացակարգը սահմանող դրույթների վերլուծությունից հստակ պատկերացում չի ձևավորվում փորձաքննության՝ որպես փուլային գործընթացի մասին և օրենքի համապատասխան դրույթների (հոդվ. 6 3-րդ, 4-րդ և 5-րդ մասեր, հոդվ. 8 1-ին, 2-րդ և 5-րդ մասեր, հոդվ. 9 5-րդ մաս, հոդվ. 10 1-ին մաս) վերլուծությունը բույլ չի տալիս ֆիքսել փորձաքննության ժամկետների հաշվարկի սկզբը: Ակնհայտ է նաև, որ վերոհիշյալ օրենքում կիրառված «ազդակիր համայնք» տերմինը, որը ներառում է միայն շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավիր ազդեցության ենթակա մարզի (մարզերի), համայնքի (համայնքների) բնակչությանը, խիստ նեղ է, քանի որ հնարավորություն չի ստեղծում շրջակա միջավայրի պահպանության ոլորտի բոլոր շահագրգիռ անհատներն ու հասարակական կազմակերպություններին մասնակցելու որոշումների ընդունմանը միայն այն պատճառով, որ նրանք նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության անմիջականութենք ենթակա չեն: Դեռ ավելին, անհրաժեշտ է վերանայել օրենքի հիմնական հասկացությունների համակարգը դրանում առկա բացրողությունների, անշշտությունների, ձևակերպությունների թերությունների վերացման նպատակով (օր՝ Օրենքի հիմնական հասկացություններում բացակայում է «հասարակայնություն» եզրույթի բնորոշումը, մինչդեռ օրենքի մի շարք դրույթներում հասարակայնությունն օժտված է որոշակի իրավունքներով, սակայն անորոշ է այդ իրավունքները կրողների շրջանակը): Գտնում ենք նաև, որ պետք է դրսուրել տարբերակված մոտեցում նախատեսվող գործունեության տեսակները դասակարգելիս՝ ենելով շրջակա միջավայրի վրա դրանց ունեցած բարձր, զգալի կամ ցածր ազդեցություններից՝ ըստ միջազգային և եվրոպական իրավունքի սկզբունքների:

Ինչպես վերը նշեց, այս առումով ավելի առաջադիմական մոտեցում է դրսուրում Օրիուսի կոնվենցիան, որը շրջակա միջավայրի առնչությամբ որոշումներ կայացնելու գործընթացի մասնակից սուբյեկտը բնորոշում է «շահագրգիռ հասարակություն» տերմինվ, որն ընդգրկում է նաև շրջակա միջավայրի պահպանությանն աջակցող հասարակական կազմակերպություններին, եթե դրանք համապատասխանում են ազգային օրենսդրությամբ ներկայացված պահանջներին: Կարենք է նշել նաև, որ Օրիուսի կոնվենցիայի 1-ին հավելվածում նախատեսված է գործունե-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

որյունների բոլոր այն տեսակները, որոնց կապակցությամբ որոշումներ ընդունելիս պետք է իրականացվի հասարակայնության մասնակցությունը: Եվ, վերջապես, գործող օրենքը չի նախատեսում պատասխանատվության միջոցներ նշված սուբյեկտների կողմից իրենց պարտականությունները չկատարելու համար: Այսպիսով, «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը քոյլ է տալիս արձանագրելու, որ այդ իրավական ակտը լիարժեք չի կարգավորում փորձաքննության գործընթացը և չի ստեղծում պատշաճ իրավական իիմքեր ՀՀ միջազգային պայմանագրերով (մասնավորապես՝ «Ծրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրիության կոնվենցիա և «Անդրասահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» Էսպո կոնվենցիա) ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար:

Օրիության կոնվենցիան նախատեսում է, որ «Չափազգիո հասարակայնությունը» նախատեսվող գործունեության մասին տեղեկանա գործընթացի ամենավաղ փուլում, այսինքն, եթե դեռ կարող է խնդրու առարկայի շուրջ առաջարկել իր այլընտրանքային տարբերակները<sup>7</sup> և ոչ թե այդ մասնակցությունը վերջնական փուլում կրի գուտ ձևական բնույթ: Մասնավորապես, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, «Հասարակայնության մասնակցության ընթացակարգերը նախատեսում են զանազան փուլերի իրագործման ողջամիտ ժամկետներ, որոնք ապահովում են բավարար ժամանակ... հասարակության տեղեկացման և նախապատրաստման ու արդյունավետ մասնակցության համար շրջակա միջավայրին առնչվող հարցերի կապակցությամբ»: Այնիայտ է, որ հասարակայնության մասնակցության ողջամիտ ժամկետների հարցը, որը կարմիր գծով անցնում է ողջ Կոնվենցիայի միջով, այստեղ ևս կրկնվում է, ընդունում այս պարագայում շեշտը դրվում է այն ողջամիտ ժամկետի վրա, որն անհրաժեշտ է հասարակությանը որոշում կայացնելուն մասնակցելու և նախապատրաստվելու համար: Ինչ վերաբերում է զանազան փուլերին, ապա պետք է նկատի ունենալ, որ կապված նախատեսվող գործունեության մասշտաբների հետ, որոշման ընդունումը կարող է լինել բարդ և երկարատև գործընթաց, որոնք նախատեսում են մի քանի փուլեր ու զուգահեռ գործընթացներ: Եվ յուրաքանչյուր կոնվ-

ետ որոշման ընդունման պարագայում կարևոր է հասարակայնության արդյունավետ մասնակցությունը ոչ թե մեկ փուլում, այլ բոլոր փուլերում: Այնիայտ է, որ թեև Օրիության կոնվենցիան մանրամասն իրավական կարգավորման է ենթարկում հիշատակված հարաբերությունները, սակայն, պետք է նշել, որ Կոնվենցիայի կիրառման ընթացքում առաջ են գալիս մի շարք դժվարություններ, որոնք կապված են «վաղ փուլ», «արդյունավետ մասնակցություն», «ողջամիտ ժամկետ» հասկացությունների մեկնարանման հետ, ինչը կարծում ենք, ենթերկ առանձին պետությունների առանձնահատկություններից, որոշակի ժամանակահատվածի ընթացքում կունենա իր սպառիչ պատասխանը:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 8-րդ կետն էլ, հետևողական գոնվելով նախատեսվող գործունեության վերաբերյալ որոշում կայացնելու գործընթացին հասարակայնության մասնակցության դերին ու նշանակությանը, պարտավորեցնում է Կոնվենցիայի կողմերին ապահովելու, որ համապատասխան որոշման մեջ պատշաճ ձևով արտացոլված լինեն հասարակայնության մասնակցության արդյունքները: Այսինքն, այստեղ խոսքը վերաբերվում է ոչ թե հասարակայնության մասնակցության փաստին, այլ դրա արդյունքներին, որը որպես համապատասխան պետական մարմինների պարտավորություն՝ սահմանված է Օրիության կոնվենցիայով: Այս դրույթը տարբեր ձևակերպումներով արտացոլված է նաև Կոնվենցիայի այլ հոդվածներում: Մասնավորապես, 8-րդ հոդվածի համաձայն պետական իշխանության մարմինները պարտավոր են աջակցել հասարակայնության արդյունավետ մասնակցությանը անմիջական կիրառման ուժ ունեցող նորմատիվ դրույթների և այլ ընդհանուր կիրառում ունեցող իրավաբանական պարտադիր նորմատիվ ակտերի նախապատրաստմանը, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, և հասարակության մասնակցության արդյունքները հաշվի են առավել առավելագույն հնարավորին:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ինչպես բազմաթիվ այլ պետություններում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության արդյունքները հնարավորինս հաշվի առնելու նորմերը դեռևս գտնվում են «մշակման» փուլում: Կարծում ենք՝ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ են գործի դմել նաև որոշ տեխնիկական հնարամատներ, ինչպես օրինակ, հասարակական լսումներն արձանագրելը

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կամ գրավոր նկատառումների գրանցումը: Այսինք, որպեսզի պետական մարմինը հասարակության մասնակցության արդյունքները հաշվի առնի, նախ պետք է քննարկի յուրաքանչյուր նկատառում, որ կներկայացվի հասարակության ներկայացուցիչների կողմից: Դա, իհարկե, չի նշանակում, որ պետական մարմինը պետք է համաձայնի բոլոր նկատառումների հետ, այլ, քանի որ ինքն է պատասխանատվություն կրում իր ընդունած որոշման համար, պետք է կարողանա դրա ընդունումից հետո իմանավորի, թե ինչու այս կամ այն նկատառումները հաշվի չի առել: Հակառակ դեպքում դա կդիտվի որպես Կոնվենցիայով նախատեսված ընդհանուր արարողակարգի խախտում, որը կարող է հանգեցնել այդ որոշումը վարչական կամ դատական կարգով վիճարկելու հանգամանքին: Անպայման պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր էական ազդեցություն ունեցող կոնկրետ հարցերի կապակցությամբ որոշումները, ինչպես նաև շրջակա միջավայրին առնչվող ծրագրերը, նախագծերը, անմիջական կիրառման ուժունեցող նորմատիվ դրույթները, և/կամ ընդհանուր կիրառում ունեցող պարտադիր նորմատիվ ակտերն իրենցից գաղտնիք չեն ներկայացնում և բաց են ոչ միայն այդ որոշումների կայացման գործընթացին մասնակցած շահագրգիռ հասարակայնության, այլև ողջ հանրության համար: Դա սահմանված է նաև Օրիություն կոնվենցիայի 6-րդ հոդվածի 9-րդ կետով, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ պետական մարմնի կողմից որոշում ընդունելուց հետո հասարակայնությունը անմիջապես տեղեկացվի այդ որոշման մասին՝ ըստ պատշաճ ընթացակարգերի: Յուրաքանչյուր կողմ հասարակայնությանը ներկայացնում է որոշման տեքստը, նշելով այն պատճառները և շարժառիթները, որոնք ընկած են դրա իմքում»: Այսինքն, Կոնվենցիան նախատեսում է, որ ընդունված որոշումը իր իմանավորվածության հետ միասին պետք է ներկայացվի հասարակայնությանը:

Անհրաժեշտ ենք համարում առանձնահատուկ ուշադրության արժանացնել Օրիություն կոնվենցիայի 7-րդ հոդվածին, որը նախատեսում է, որ յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի հասարակայնության մասնակցությունը շրջակա միջավայրին առնչվող ծրագրերի, նախագծերի նախապատրաստմանը և քաղաքականության մշակմանը, ինչպես նաև Կոնվենցիայի 8-րդ հոդվածին, ըստ որի. «Յուրաքանչյուր Կողմ..., միզեւ է գործադրում աջակցելու հասարակայնության արդյունավետ մասնակցությանը պետա-

կան մարմինների կողմից անմիջական կիրառման ուժ ունեցող նորմատիվ դրույթների և այլ ընդհանուր կիրառում ունեցող իրավաբանական պարտադիր նորմատիվ ակտերի նախապատրաստմանը, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա: Այդ նպատակով ձեռնարկվում են հետևյալ միջոցառումները.

ա. սահմանվում են ժամկետներ, որոնք բավարար են արդյունավետ մասնակցությունը ապահովելու համար,

բ. կանոնների նախագծերը հրապարակվում են կամ այլ ձևով տրամադրվում են հասարակությանը,

գ. հասարակությանը հնարավորություն է ընձեռվում ներկայացնել իր նկատառումները անմիջականորեն կամ ներկայացուցական խորհրդակցական մարմինների միջոցով:

Հասարակայնության մասնակցության արդյունքները հաշվի են առնվում առավելագույն հնարավոր չափով»:

Ցանկով, այս դրույթների իրականացումը Հայաստանի Հանրապետությունում այսօր դեռևս հանդիպում է բազմաթիվ խոշընդուների, քանի որ ինչպես վկայում է պրակտիկայի վերլուծությունը, թե էկոլոգիական քաղաքականության մշակման, թե ծրագրերի ու պլանների նախապատրաստման և թե առավել անմիջական կիրառման ուժ ունեցող նորմատիվ դրույթների և/կամ ընդհանուր կիրառում ունեցող իրավաբանական պարտադիր ակտերի նախապատրաստման գործում հասարակայնության մասնակցության մակարդակը խիստ ցածր է՝ ելնելով մի շաբթ օրյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներից: ՀՀ Սահմանադրության 75 հոդվածի համաձայն Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է պատգամավորներին և կառավարությանը: Այդպիսով, Հայաստանի Հանրապետությունում հասարակությունը օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտված չէ և չի կարող հանդիս գալ, օրինակ, շրջակա միջավայրի առնչությամբ որևէ օրենքի նախագծի ներկայացմանը: Իհարկե, քաղաքացիներն ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները կարող են իրավիրվել օրենքների նախագծերի քննարկմանը, արտահայտել իրենց կարծիքը դրանց առնչությամբ, բայց օրենքի ընդունման պրոցեսում նրանք ձայնի իրավունքով օժտված չեն և օրենսդրի մարմինը օրենքն ընդունելիս առաջնորդվում է զուտ իր տեսակետներով՝ հաշվի առնելով հասարակայնության մասնակցության արդյունքները:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Երբեմն օրենսդիրը հրավիրում է նաև անկախ փորձագետների օրենքների նախագծերի առնչությամբ իրենց դիրքորոշումն արտահայտելու, սակայն, ինչքան էլ որ փորձագետների տեսակետները հիմնավորված լինեն, օրենսդիրը ազատ է որոշելու յուրաքանչյուր նախագծի ճակատագիր: Պրակտիկան վկայում է, որ հասարակության համար լուրջ հետաքրքրություն ներկայացնող որոշ օրենքների նախագծեր հրապարակել են, ինչպես օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրը, սակայն օրենսդիրը որևէ պարտականություն չունի հաշվի առնելու հնչած կարծիքներն ու տեսակետները: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ թե՛ Ազգային ժողովի բնապահպանական հարցերով մշտական հանձնաժողովը, թե՛ բնապահպանության նախարարությունը ուղարկում են շրջակա միջավայրի առնչությամբ օրենքների նախագծերը թերությունների ու բացերի վերաբերյալ հիմնավորված կարծիք ներկայացնելու հնարավորություն ունեցող հասարակական կազմակերպությունները եղակի են, և մյուս կողմից՝ այդ կազմակերպությունները չեն կարող էական ազդեցություն ունենալ ընդունվող նախագծերի վրա<sup>8</sup>: Արդյունքում կարելի է եղակացնել, որ հասարակությունը հիմնականում օրենքների նախագծերի քննարկման փուլում չի նաևնակցում և ծանոթանում է դրա հետ այն ժամանակ, եթե արդեն օրենքն ընդունվում է:

Բացի այդ, պետք է նշել նաև, որ Հայաստանի Հանրապետությունում հասարակական էկոլոգիական փորձաքննության եղակացությունը պարտադիր իրավաբանական ուժով օժտված չէ: Պարզապես նշենք, որ վերջին ժամանակներ մի փոքր փոխվել է վերաբերմունքը հասարակական կազմակերպություններին օրենքների նախագծերի հանրային լուրմներին մասնակից դարձնելու, ինչպես նաև մամուլի միջոցով հասարակայնությանը որոշակի հարցերին տեղեկացնելու առումով, ինչը, սակայն, դեռևս ուղեկցվում է լուրջ թերություններով ու բացերով և շատ չնշին քայլ է իրավիճակի լուծում համարելու համար:

Ցավոք, Հայաստանի Հանրապետությունում գրեթե անհնարին է հանդիպել դեպքերի, եթե հասարակությունը իրավիճակի արտադրական օբյեկտների տեղադրման թույլտվության հատկացման, տեղական կամ տարածքային պլանների կազմնան, քաղաքա-

կանության մշակման գործընթացներին: Այդ ընթացակարգերին մասնակցող անձանց որևէ ցուցակ գյուրյուն չունի: Մինչդեռ, ինչպես վերը նշվեց, Օրիուսի կոնվենցիայի 7-րդ հոդվածը նախատեսում է. «Համապատասխան պետական մարմնիը, հաշվի առնելով սույն Համաձայնագրի նպատակները, որոշում է հասարակության այն խավերը, որոնք կարող են մասնակցել շրջակա միջավայրի հետ կապված ծրագրերի ու նախագծերի նախապատրաստմանը: Ըստ հնարավորության, յուրաքանչյուր կողմ ճիգեր է գործադրում, որ ապահովի հասարակայնության մասնակցությունը շրջակա միջավայրին առնչվող քաղաքականության մշակմանը»:

Իսկ առանձին պետություններ, արդեն վարուց որդեգրել են քաղաքականության մշակմանը հասարակայնության ներգրավման ձևերն ու միջոցները, ինչպես օրինակ՝ Նիդեռլանդներում, թեև դա օրենքով նախատեսված չէ, էկոլոգիական քաղաքականության մշակմանը հասարակայնության ներգրավումն ապահովում է պաշտպանության նախարարությունը: Դա իրականացվում է երկրի գինված ուժերի համապատասխան ծառայությունների, բնապահպանության նախարարության, շրջակա միջավայրի հարցերով նախարարության և բնապահպանական հասարակական կազմակերպությունների հետ քաղաքականության նախագծի քննարկման միջոցով<sup>9</sup>: Ինչ վերաբերում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի իրագործմանը որոշ երկրներում, ապա ՄԱԿ-ի ԵՏՀ շատ պետություններ որդեգրել են այնպիսի քաղաքականություն, որի համաձայն օրենքների և այլ նորմատիվ ակտերի մշակման ընթացքում պետական մարմինները պետք է խորհրդակցեն հասարակայնության հետ: Օրինակ, Եվրոպական հանձնաժողովը 1997թ-ին հիմնել է Էկոլոգիական հարցերով խորհրդակցական հանձնաժողով, որի կազմում ընդգրկված են նաև բնապահպանական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ<sup>10</sup>:

Ուստի, ելնելով միջազգային պրակտիկայից և հիմնվելով Օրիուսի կոնվենցիայի դրույթների վրա, գտնում ենք, որ քննարկվող ոլորտի խնդիրների արդյունավետ լուծման համար խիստ կարևոր նշանակություն կունենա Հայաստանի Հանրապետությունում հատուկ լիազորված մարմնի ստեղծումը, ինչպիսին, կարծում ենք, կարող է լինել ՀՀ բնապահպանության նախարարությանը կից հասարակական էկոլոգիական խորհրդը, որը կգործի համապատասխանաբար ընդունված «Շրջակա միջավայրի առնչությամբ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պլանների, ծրագրերի, քաղաքականության վերաբերյալ որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության կարգը հաստատելու մասին» որոշման հիման վրա: Նրանում պետք է մանրանասն իրավական կարգավորման ենթարկվեն ամենավաղ փուլից սկսած պլանների, ծրագրերի, քաղաքականության վերաբերյալ հասարակայնության իրազեկման մարմինները, նրանց լիազորություններն այս բնագավառում, իրազեկման նպատակներն ու հստակ եղանակները, մասնակիցների շրջանակի որոշման չափանիշները և այլն: Կարծում ենք, որ այս խորհրդի գործունեությունը շատ համահունչ կարող է լինել 1992թ. փետրվարին Հայաստանի, Թեղառուսի, Աղբքեցանի, Ղազախստանի, Կիրգիզիայի, Մոլդովայի, Ռուսաստանի, Դաշտինության, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի և Ուկրաինայի միջև ստորագրված «Էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանության հարցերով համագործակցության մասին» համաձայնագրի<sup>11</sup> հիման վրա ստեղծված Միջային կառավագարական խորհրդի գործունեությանը, քանի որ նշված երկու խորհրդների միջև սերտ համագործակցությունը տեղեկատվության տրամադրման, առավել արդյունավետ մեխանիզմների ներմուծման եղանակով հնարավորություն կտա բարձրացնելու շրջակա միջավայրի պահպանության, միջային կառավագարական ծրագրերի իրականացման արդյունավետությունը: Էկոլոգիական որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության միայն մանրակրկիտ ու հիմնա-

Վորված քաղաքականության մշակումը կարող է հանդես գալ որպես այս գործընթացում առավել լուրջ արդյունքների և մեծ ձեռքբերումների հասնելու գրավական<sup>12</sup>:

Այսպիսով, ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս մեծ ջանքեր պետք է կենտրոնացնել Օրիուսի կոնվենցիայի ինչպես 6-րդ, այնպես էլ հատկապես 7-րդ և 8-րդ հոդվածներով նախատեսված պահանջներն իրականացնելու համար, քանի որ եթե կոնվենցիան գործունեության տեսակների առնչությամբ որոշումների ընդունմանը հասարակայնության մասնակցությունը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում որոշակի չափով կարգավորվում է էկոլոգիական օրենսդրությամբ, ապա շրջակա միջավայրի հետ կապված պլանների, ծրագրերի, քաղաքականության մշակմանը վերաբերող հարցերի լուծմանը հասարակայնության մասնակցության ընթացակարգի հիմնախնդիրը մինչ այժմ հստակ և բավարար իրավական հիմքեր չունի: Մինչդեռ ժողովրդավարական զարգացման և բաց հասարակության ձևավորման համար խիստ անհրաժեշտ է ապահովել հասարակայնության իրազեկման պատշաճ մակարդակ և ներգրավել նրան քաղաքականության ձևավորման գործընթացին, հատկապես այնպիսի խոցելի ոլորտում, ինչպիսին էկոլոգիան և շրջակա միջավայրի պահպանությունն է<sup>13</sup>:

<sup>1</sup> Стін Իսկոյան Ա.Բ. Повышение уровня экологической осведомленности общественности.// Իրավագիտության հաղաելու, 2000, էջ 46:

<sup>2</sup>Шу Кириленко А. Орхусская конвенция как инструмент выхода из экологического кризиса и укрепления экологической безопасности. Ташкент. 2004. №4. С. 3-12.

<sup>3</sup> СБІЛ Двері в демографію. Путеводитель по странам Восточной Европы. Львов, 1998. С. 5.

<sup>4</sup> Տես «Արդյունաբերական վրաբների անդրասահմանային ներգործության մասին» կոնվենցիան ընդունվել է 1992թ. մարտի 17-ին Հեսկիլերից:

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ ՊԾ 2001 12 27/42(174) բայուսիլել է 04.12.2001 թվականի 27.12.2001:

<sup>6</sup> Ст. 48 Конвенции о правах ребенка, принятой в 1989 г., и Конвенции о правах инвалидов, принятой в 2006 г.

<sup>7</sup> SKU Ваше право на здоровую окружающую среду. Нью-Йорк и Женева, 2006. С. 10.

<sup>8</sup> См. Двери в демократию. Путеводитель по странам Восточной Европы. Львов, 1998. С. 44.

<sup>9</sup> Ст. 1 Орхусская конвенция: Руководство по осуществлению, Организация Объединенных Наций. Нью-Йорк и Женева, 2000, С. 194.

<sup>10</sup> Տես Եվրոպական համաձայնողութիւն 97/150/Ճ 1997թ-ի փետրվարի 24-ի որոշումը. Official Journal, L 058 of 27 February 1997, Խ. 48:

<sup>11</sup> Տես Էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանության հարցերով համագործակցության մասին համաձայնագրը՝ ՀՀ ԽՈԴՀ ՊԾ երարշավակուրամ 3 բր. լուրի N3 (11) 20 դեկտեմբերի 2004:

<sup>12</sup> Сб. Экологическая безопасность и защита прав человека. Ташкент. 2001. С. 34-35.

<sup>13</sup> Ст. 5 Экологическая безопасность и защита прав человека. Ташкент. 2001. С. 34-35.

<sup>14</sup> Ст. 5 Закона о защите прав человека // Законы Республики Узбекистан. Т. I. Узбекистан. 2007. № 5.